Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015 թվականի

2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական բաժինները, դեկանատները և ամբիոնները հետևողական աշխատանք են կատարել ուսումնական գործընթացի կազմակերպման, կատարելագործման և քննաշրջանները կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Համալսարանում քննական գործընթացը կազմակերպվել է գիտական խորհրդի կողմից հաստատված քննակարգին համապատասխան: Կիսամյակի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են համակարգչային և գրավոր թեստային ստուգարքներ և քննություններ համահամալսարանական հիմնական առարկաների գծով: Կիսամյակի ընթացքում ամբիոնները թարմացրել են հարցաշարերը, շտկել են բովանդակային և տեխնիկական թերությունները: Թեստային քննությունները կազմակերպվել են ամբիոնների վարիչների, դասավանդող դասախոսների և ասիստենտների մասնակցությամբ:

Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները մեծ ուշադրություն են դարձրել ոչ միայն քննական գործընթացի կազմակերպման և անցկացման, այլ նաև կիսամյակի ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործման հարցերին: Կիսամյակի ընթացքում բավական աշխատանքներ են կատարվել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի արդիականացման, ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործման, դասախոսների անհատական բեռնվածությունների և դրանք գործող պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ:

Առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների ուսման առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 73.0%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 73.7%-ի դիմաց: «Գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 17.1, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 21.0% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար, 16.0 և 20.2%): Ամենաբարձր առաջադիմությունը գրանցվել է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետում՝ 84.3% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 83.6%), իսկ ամենացածրը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում՝ 70.8% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 63.3%): Հատկապես բարձր է պետական

պատվերի համակարգում սովորող ուսանողների ուսման առաջադիմությունը. «գերազանց», «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 70.0% (նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում՝ 69.9%):

Առկա ուսուցման մագիստրատուրայի ուսանողների առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 82.0%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 78.1%-ի դիմաց: Ուսանողների 40.8%-ը կիսամյակն ամփոփել է «գերազանց», 12.3%-ը՝ «գերազանց» և «լավ» գնահատականներով (նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար, 31.3 և 13.9%): Նախորդ տարվա ցուցանիշների համադրումից ակնհայտ է. բարձր գնահատականներով սովորողների ընդհանուր առաջադիմությունը բարձրացել է:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայում առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 63.2%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 64.7%-ի դիմաց: «Գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 9.3, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 19.1% (նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար, 1.7 և 3.3%):

Հեռակա ուսուցման բակալավրիատի I-IV կուրսերում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. քննաշրջանից հետո առաջադիմությունը կազմել է 39.5%, «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը՝ 1.5 (22 ուսանող), իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 4.9% (74 ուսանող):

Ինչ վերաբերում է առաջին վերահանձնումից հետո ուսման առաջադիմության արդյունքներին, ապա նշենք, որ բացարձակ առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատի I-IV կուրսերում 86.1-ից բարձրացել է 87.3%-ի, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը զգալիորեն նվազել է՝ 13.9-12.7%:

Առկա ուսուցման մագիստրատուրայում վերահանձնումից հետո առաջադիմությունը կազմել է 94.1, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը՝ 59.0%:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայում առաջադիմությունը առաջին վերահանձնումից հետո կազմել է 84.5%, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը նվազել է՝ 36.8-15.5%:

Հարկ է նշել, որ 2014-2015 ուսումնական տարում հեռակա ուսուցման մագիստրատուրայում 307 մագիստրանտից, ում թույլատրվել է մասնակցել մագիստրոսական թեզի պաշտպանությանը, ավարտել են 278-ը (90.8%): Նախորդ տարիներին թեզը չպաշտպանած 15 շրջանավարտ պաշտպանել և ստացել է դրական գնահատական:

Արձանագրելով դրական տեղաշարժերը, խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Ուսանողների դասահաճախումները (հատկապես մագիստրատուրայում) և դրանց գրանցումները դասամատյաններում գոհացուցիչ համարել չի կարելի:

2. Բացթողումներ և թերություններ կան դասատախտակների և քննագրաֆիկների կազմման գործընթացում:
3. Չնայած դրական առաջընթացին, դեռևս չի հաջողվում ամբողջապես բացառել կարգապահական խախտումները և դասաձախողումները:
4. Լուրջ թերություններ կան առանձին դասախոսների կողմից ուսանողների ակտիվության գնահատման և ամփոփման աշխատանքներում:
5. Թերություններ կան նաև փորձառությունների կազմակերպման անցկացման և գնահատման գործընթացում:
6. Խնդիրներ կան ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, աշխատանքի կատարման, գրախոսման և պաշտպանության գործընթացներում:
7. Որոշ մոդուլների գծով թեստային բազաները ոչ միայն պարբերաբար չեն բարեփոխվում, այլև անգամ նվազագույն քանակի հարցեր չեն պարունակում, չեն ստուգվում թեստային բազաները քննաշրջանից առաջ, որոշ ամբիոնների վարիչների կողմից այդ գործընթացները չեն վերահսկվում:
8. Առկա են ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի արդիականացման և դրանք գործատուների ժամանակակից պահանջներին համապատասխանեցման խնդիրներ:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**
   1) մշակել միջոցառումներ քննությունների անցկացման բարելավման և քննակարգում նկատված բացթողումների վերացման ուղղությամբ.
   2) վերահսկողություն սահմանել ամբիոններում կադրերի ընտրության գործընթացի վրա՝ առաջնորդվելով բացառապես այն հիմնական նպատակով, որպեսզի դասավանդեն բարեխիղճ, բարձր մասնագիտական որակներով օժտված, ակտիվ գիտական գործունեություն կատարող, դրական հատկանիշներով առանձնացող դասախոսներ.
   3) հետևել դեկանատների և ամբիոնների աշխատանքային, կատարողական, կարգապահությանը: Արդյունքները ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը տվյալ ֆակուլտետի դեկանի հաշվետվության օրը.
   4) մշակել դեկանատ-ամբիոններ փոխհարաբերությունների կանոնակարգմանն ուղղված միջոցառումներ.
   5) հսկողություն սահմանել ուսանողների հաճախումների հաշվառման գործընթացի վրա: Յուրաքանչյուր արձանագրված խախտում քննարկել և մեղավորներին ենթարկել վարչական տույժի.
   6) ֆակուլտետների խորհուրդների նիստերում հանգամանալից քննարկել քննաշրջանի արդյունքները, մշակել միջոցառումներ (նշելով պատասխանատուներ) և հետևել դրանց կատարման ընթացքին:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝

1) հետևողական աշխատանք կատարել կիսամյակի ընթացքում նկատված թերությունները և բացթողումները շտկելու ուղղությամբ.
2) ամփոփաթերթերում ուսանողների ակտիվության սխալ հաշվարկման ու գրանցման, ինչպես նաև արդյունքների սխալ լրացման յուրաքանչյուր դեպք առանձին քննարկել և մեղավորներին ներկայացնել վարչական տույժի.
3) ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի պահանջներին համապատասխան, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով՝ ամբիոնների հետ քննարկել հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները և մինչև մարտի 15-ը ներկայացնել ռեկտորատ.
4) ամենօրյա հսկողություն իրականացնել ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ: Դասախոսների և ուսանողական խմբերի կողմից դասաձախողումների յուրաքանչյուր դեպք քննարկել դեկանատի և/կամ ֆակուլտետի խորհրդի նիստերում, կիրառել համապատասխան պատժամիջոցներ՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա.
5) արգելել դասերի ընթացքում դասախոսների և ուսանողների կողմից բջջային հեռախոսների օգտագործումը, կարգազանցության յուրաքանչյուր դեպք քննարկել դեկանատի նիստում և կրկնվելու դեպքում ներկայացնել վարչական տույժի.
6) ամբիոնների հետ՝
   ա) հսկողություն սահմանել դասախոսների, ուսանողների հաճախումների հաշվառման գործընթացի վրա, խախտման յուրաքանչյուր դեպք դարձնել քննարկման հարց,
   բ) պարբերաբար քննարկել ուսանողների բացակայությունների հարցը, մշակել միջոցառումներ դրանք նվազեցնելու ուղղությամբ:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

1) պարբերաբար թարմացնել և բարելավել թեստային բազաները՝ յուրաքանչյուր կիսամյակում առնվազն 20%-ով փոփոխելով դրանք և ավարտել մինչև յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ ամսվա 15-ը.
2) խիստ պատասխանատվությամբ առաջնորդվել ինչպես դասաբաշխումներն իրականացնելիս, այնպես էլ դասախոսական կադրեր ընտրելիս: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել մագիստրատուրայում դասավանդողներին ներկայացվող պահանջներին. ընդգրկել միայն գիտական աստիճան ու գիտական կոչում և մասնագիտական փորձ ունեցող դասախոսներին.
3) անհատական բեռնվածությունները բաշխելուց հետո դեկանատներ ներկայացնել ֆակուլտետներում դասավանդվող առարկաների դասախոսների և ասիստենտների ցանկը.
4) հսկողություն սահմանել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների անցկացման որակի, արտալսարանային աշխա-

տանքների, դասախոսների կատարողական կարգապահության նկատմամբ: Հաճախակի կազմակերպել դասալսումներ և դրանց արդյունքները քննարկել ամբիոնների նիստերում.

5) բողոքարկումների գործընթացը կազմակերպել միայն հանձնաժողովներով (հանձնաժողովում ընդգրկել նաև դասավանդող դասախոսին): Գնահատականի յուրաքանչյուր փոփոխություն դարձնել քննարկման առարկա.
6) հետևել թեստային քննությունների առաջադրանքների կազմմանը, գնահատման գործընթացի յուրաքանչյուր խախտում դարձնել քննարկման առարկա, մշակել որոշակի միջոցառումներ նման երևույթները բացառելու ուղղությամբ,
7) հետևողական աշխատանք կատարել ուսանողների հետ, օժանդակել վարձավճարների գանձման գործընթացին.
8) մեծ ուշադրություն դարձնել ուսանողների փորձառությունների անցկացման վայրերի ընտրության, հաշվետվությունների ժամանակին ներկայացման և պաշտպանության գործընթացին.
9) բացառել զբաղվածության պատճառով հաճախակի դասաձախողումներ թույլ տված մասնագետների ներգրավումը դասավանդման գործընթացում:

4. **Սույն որոշումը քննարկել ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Մ.Ն.Հարությունյանին և Պ.Ա.Քալանթարյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

27.02.2015 թ.